ՋՈՒՐԱԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ - Հայրենակիցներ, փաստորեն Արցախում դրությունը պատերազմական է, Արցախի դեմ գործում է դավադրություն՝ կազմակերպված դավադրություն, այսինքն ընդունված է ծրագիր և այն իրականացվում է ամենաարտորեն: Ծրագիրը հետևյալն է՝ Արցախը դատարկել հայերից: Խոստովանենք, որ այդ ծրագիրը կառավարությունը իրականացնում է բոլոր հնարավոր միջոցներով: Եթե մենք շարունակենք մեզ պահել այնպես, ինչպես պահել ենք տարի ու կես, երևի թե մենք ընդամենը ականատես լինենք այդ ողբերգությանը: Արցախը ինքնորոշվել է: Արցախը հայկական առաջին տարածքն է Խորհրդային Միությունում, որ ինքնորոշված է: Այսինքն ամբողջ բնակչությունը՝ 150 000 մարդ, հանրաքվեի միջոցով, իրենց մարզկոմի որոշմամբ որոշեցին իրենց անկախությունը և համարեցին իրենց Ադրբեջանի կազմից դուրս: Մենք որ 3,5 մլն. ենք, մենք որ միութենական հանրապետություն ենք, մենք, որոնց Արցախը համարում է իր ավագ եղբայրը, վախենում ենք կրկնել այդ քայլը: Եկեք խոստովանենք, որ մեր պասիվությամբ մենք էլ ենք թշնամու ջրաղացին ջուր լցնում: Մենք պետք է հասկանանք, որ Արցախի փրկությունը հայերի անկախացումով է լինելու: Արցախին ճահիճից հանելու համար մենք պետք է դուրս գանք այդ ճահիճից: Արցախին օգնելու համար մենք պետք է կարողանանք նույն ուժգնության քաղաքական քայլեր անել: Այն օրը, երբ Խորհրդային Միության կառավարությունը մերժեց մեր արդարացի, հումանիստական պահանջը, հենց այդ օրը մենք պետք է որոշում ընդունեինք անկախության համար: Սակայն ի՞նչ Միության մասին է խոսքը, երբ հայ ազգի շահերը, ազգային շահերը հակասում են Խորհրդային Միության շահերին: Ուրեմն մենք միասին լինել չենք կարող, իսկ եթե միասին լինենք նշանակում է պետք է հրաժարվենք մեր ազգային շահերից՝ ի օգուտ Խորհրդային Միության շահերի: Եղբայրներ, անջատումը մեզանից առաջ արդեն որոշել է ԽՍՀՄ կառավարությունը՝ մերժելով մեր ազգային շահերին համապատասխանող, մարդկային, միջազգային բոլոր օրենքներին համապատասխանող պահանջը: Դրանով ինքը իրեն հայտարարել է անօրինական: Պարզապես զարմանալի է թե ինչու՞ մինչև հիմա մենք չենք կարողացել այդ հնարավորությունն օգտագործել: Նրանց քաղաքական որոշմանը կարող ենք հակադրել միայն քաղաքական որոշում: Քաղաքական որոշումը այս իրադրության մեջ միակն է՝ Հայաստանի անկախա-

---

ԱԻՄ-ի ,,Ինքնորոշում,, թերթ, 12 օգոստոսի, 1989թ., հ.7, էջ 7

չապետ լինելու: Եթե ԱՄՆ-ի անդամ Աշոտ Նավասարդյանը իր երիտասարդ կյանքի 12 տարիները անց է կացրել աքսորավայրերի հրեշավոր ռեժիմներում, ուրեմն արժանի է: Արժանի ները շատ են: Այդպիսիները կան և պետք է ճանաչել նրանց: Ահա ինչպիսին պետք է լինի Հայաստանի կառավարությունը:

Անկախությունը մարդու, անհատի և ազգի նորմալ ապրելու ձևն է: Հակառակ դեպքում մարդը և ազգը դրվում է ստրուկի վիճակում:

Պետք է ի վերջո հասկանալ, որ ԽՍՀՄ-ի կազմում մնալը մահացու է: Այսօր մեզ քաշում են պատերազմի մեջ Ադրբեջանի հետ, վաղը կքաշեն Վրաստանի դեմ:

ԽՍՀՄ-ի կազմի մեջ լինելով մենք միայն տարածքներ ենք կորցրել: Վերադարձնելու մասին խոսք էլ չի եղել: Իսկ անկախ պետականության 2 տարվա ընթացքում, կնքել ենք 2 պայմանագիր, որոնցով Հայաստանի տարածքը տասնապատկվել է: Սրանից պարզ երևում է թե ինչ է մեզ պետք՝ մեր հայրենիքը վերադարձնելու համար:

Առաջին հերթին անկախություն: Մեր ազգը քաշում են հերթական խարդավանքի մեջ: Այդ խարդավանքի վերնագիրը ,,վերակառուցում է,,: Ոչ ոք մեզանից չի կարող ասել, թե դա ինչ բան է: Միայն գիտենք, որ Լենինյան ծրագիր է: Միայն այդ անունը պետք է մեզ հուշի, որ հեռու այդ ծրագրից, հայեր: Այս ծրագրի միակ նպատակը նոր շերտավորում մտցնելու և դասակարգային պայքարի կրքեր բորբոքելն է Հայաստանում:

Ձեզ ուզում են իրար դեմ հանել եղբայրասպան պատերազմի: Դա էլ է ծրագրված: Մի գնացեք այդ պրովոկացիային: Դա հերյուրանք է: Ժողովուրդ, իմացեք, ովքեր Լենինյան ազգային քաղաքականությունից են խոսում, դրանք Աթարբեկյանի, Ավիս Նուրիջանյանների շարունակողներն են, դրանք նոր Փանջունիներ են, որոնք մեզ տանում են դեպի կործանում:

Հայրենակիցներ, իմացեք, որ այլ ելք չունենք, քան անկախանալը: Եվ որքան շուտ, այնքան լավ, որովհետև եթե այս սոսկալի կայսրությունը բանդվի, քանդվելու է մեր գլխին: Պետք է ժամ առաջ դուրս գալ այստեղից, որովհետև 18 թվին արդեն մի անգամ քանդվել է մեր գլխին: Ազգի փրկությունը ձեզանից է կախված, թող այստեղ կանգնած ամեն մարդ իմանա, որ հենց այստեղ, եթե ինքը դեն չշպրտեց բոլոր ազգակործան միջանկյալ ճանապարհները, եթե չգինվորագրվեց անկախության, ինքնորոշման և հանրաքվեի գործին, ապա նա

արդեն գործում է իր ազգի դեմ, որովհետև ժամանակը չի սպասում, պահն օրհասական է, դրված է մեր լինել չլինելու հարցը:

ԳԵՎՈՐԳ ՄԻՐԶՈՅԱՆ - Սիբելի հայ ժողովուրդ, այսօր լրանում է ուղիղ 1 տարին, երբ վտարեցին հայ ազգային գործիչ Պ.Հայրիկյանին: Եթե հիշում եք 1988թ. հուլիսի 20-ին ողջ Հայաստանը կանգնած էր, կանգնած էր և միասնաբար պահանջում էր Ղարաբաղը միացնել Հայաստանին:

Այդ միահամուռության պայմաններում մենք թույլ տվեցինք, որ պեսգի մեր աչքի առաջ խլեն մեզանից, մեր հայ ազգի արժանավոր զավակներից մեկին՝ Պ.Հայրիկյանին:

Այդ օրերին համազգային գործադուլ էր, որը տեղի ունեցավ հունիսի 4-ից 15-ը, և ողջ հայությունը համախմբվել էր պահանջով՝ ճանաչել Ղարաբաղի միացումը, ճանաչել ցեղասպանությունը 1915-ի և մի շարք այլ կետեր: Թեև ժողովուրդը գրավոր և բանավոր պահանջում էր վերոհիշյալին ավելացնել Պ.Հայրիկյանի ազատությունը պահանջող կետ, բայց այդպես էլ այն չմտցվեց գործադուլավորների պահանջի մեջ: Այն ժամանակ մենք մտածում էինք, որ ղարաբաղյան շարժման ղեկավարները դեռևս քաղաքականապես հասունացած չեն: Սակայն այսօր, երբ լրանում է նրա վտարման 1 տարին, երբ ողջ աշխարհն է դատապարտում այդ հակամարդկային, մարդու իրավունքները ոտնահարող քայլը, մենք այսօր նույնպես լռում ենք: Լռում ենք, իհարկե, կառավարությունը պետք է լռի, դրանում ոչ մի խոսք, բայց որ լռում են ոչ ֆորմալները, ամենօրյա հարց չեն դարձնում դա, դա արդեն ընդունելի չէ: Այսօր մենք պետք է գիտակցենք, որ ազատության ձեռքբերումը անցնում է անհատի միջով և յուրաքանչյուր անհատի նկատմամբ կիրառված բռնությունը, բռնություն է իմ, քո, ազգի նկատմամբ: Եթե մենք դա ընդունում ենք, ապա պետք է առաջին հերթին բռնության դեմ գնանք և պահանջենք հայրենիք վերադարձնել Պ.Հայրիկյանին:

Այժմ մեր ունեցած դիրքորոշման մասին ՀՀՇ-ի վերաբերյալ: ՀՀՇ նշանակում է, որ ողջ հայությունը կանգնել է ոտքի: ՀՀՇ-ը նշանակում է, որ եթե ողջ հայությունը կանգնում է ոտքի, ապա նա պետք է պահանջի միայն և միայն ազատ հայրենիք, անկախ Հայաստան: Մնացած բոլոր պահանջները չեն կարող համապատասխանել ՀՀՇ-ին: ՀՀՇ-ն չի կարող լինել փոքր կազմակերպություն: Այն պետք է համախմբի բոլոր ուժերին

և միմիայն անկախության նպատակի շուրջ:

Այժմ կուզեի մի փոքր հայտարարություն անել: Շատերը ցանկանում են ընդգրկվել Ազգային ինքնորոշում Միավորումում: Հայտարարում եմ, որ Ազգային Ինքնորոշում Միավորման անդամ կարող են դառնալ բոլոր այն ցանկացողները, ովքեր ընդունում են նրա ծրագիրը և կանոնադրությունը: Ես համառոտակի կասեմ, թե ինչ է այն իրենից ներկայացնում: Ազգային Ինքնորոշում Միավորումը անվերապահորեն համոզված է, որ հայ ազգի փրկությունը կախված է անկախ Հայաստան ունենալու հետ: Եվ դա ապացուցվել է պատմությամբ: Որպեսզի մենք կարողանանք տնօրինել մեր ճակատագիրը, որպեսզի մենք կարողանանք առաջնորդվել ազգային շահերով, մենք պետք է ունենանք մեր անկախ պետությունը: Միայն անկախ Հայաստան ունենալով է, որ պետք է դրվի հայկական հարցի լուծման սկիզբը: Մենք՝ հայերս, ունենք հայկական հարց, և մենք իրավունք չունենք թողնելու սերունդներին, այլ ինչ որ կարող ենք բոլոր ուժերով պետք է այսօր անենք: Ազգային Ինքնորոշում Միավորումը որդեգրել է պայքարի միմիայն քաղաքական ձևը՝ չընդունելով ահաբեկչական որևէ դրսևորում կամ մարդու իրավունքների ոտնահարման որևէ քայլ: Ազգային Ինքնորոշում Միավորումը հաստատապես համոզված է, որ մենք կհասնենք մեր նպատակին այն ժամանակ, երբ կստեղծենք ազգային կառավարություն, այ, հենց այստեղ, այստեղ պետք է ընտրենք մեր կառավարությունը, ճանաչենք մեր կառավարության անդամներին և ենթարկվենք նրանց: Թող Կենտկոմը իր շենքով ապրի այնտեղ, որոշումներ կայացնի՝ Մոսկվային ի նպաստ, ինչպես ուզում է:

Եվ այստեղից պետք է սկսենք մեր անկախության արշավը: Ինչու՞ ենք ասում հանրաքվե: Շատերին թվում է, թե հանրաքվե ասելով, շատ պարզ է, հանրաքվե և վերջ, ոչ, ազգի համար ճակատագրական հարցերը պետք է լուծվեն միմիայն հանրաքվեով: Ուրեմն, Գերագույն խորհուրդը, եթե ընտրված է ազգի կողմից, իրավունք չունի որոշում կայացնելու ճակատագրական հարցերի վերաբերյալ: Ահա հանրաքվեի խորհուրդը:

Վերջացնելով խոսքս, կրկին հիշեցնում եմ. մենք այսօր եթե դուրս ենք եկել, եթե գնում ենք դեպի անկախություն տանող ճանապարհով, մենք պետք է գիտակցենք, որ պետք է առաջին քայլը լինի Պարույր Հայրիկյանին հայրենիք վերադարձնելը: Մեր բոլոր միջոցները գործադրենք նրան հայրենիք վերադարձնելու: Շատերն ասում են, որ Պարույր Հայրիկյանը այնտեղ է պետք, այո, Պարույր Հայրիկյանը ցանկացած տեղ կարող է գործել, բայց փաստը արձանագրենք, ինչ է տեղի ունեցել, նը-

---

ԱԻՄ-ի ,,Ինքնորոշում,, թերթ, 12 օգոստոսի, 1989թ., հ.7, էջ 11

րան բռնի կերպով վտարել են: Երբ որ մենք կպահանջենք և նրան կվերադարձնենք հայրենիք, այն ժամանակ Պարույր Հայրիկյանը ինքը կորոշի, այստեղ կգործի, թե Սիբիրում: Սա այլ հարց է: Մենք պետք է գիտակցենք դա:

Այժմ մեր շարժման ընթացքում ձեռք բերված թվացյալ նվաճումների մասին: Մեր ժողովրդի որոշ մասը սփոփանք է ապրում, թե ընդունվել է Հայաստանի հանրապետության օր 1918-ի Մայիսի 28-ը, Եռագույն դրոշը ճանաչվել է ազգային խորհրդանիշ, ճանաչվել է Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից ցեղասպանությունը, ճանաչվել է Սումգայիթը, բայց ես կուզեի այդ հարցերին անդրադառնալ շատ հակիրճ կերպով: Ճանաչելով Հայաստանի հանրապետությունը, հանրապետության գոյությունը 1918թ. մայիսի 28-ից, դա չի նշանակում ճանաչել ազատ ու անկախ Հայաստանը: Դա միայն նպատակ ունի խառնել այդ գեղեցիկ 2 տարին այս 70 տարվա դժոխքի հետ: Այդպես չի եղել, մանրամասն չի բացատրվում, որ այդ անկախ Հայաստանը իր գոյության 2 տարում, ինչպիսի գերագույն ճիգերի գնով հասել էր հսկայական նվաճումների: Չի մեկնաբանվում, թե խորհրդային բանակը Թուրքի հետ դաշնակցած ինչպիսի դաժանությամբ վերացրեց մեր անկախությունը՝ նորանոր զոհեր և արհավիրքներ պատճառելով հայ ժողովրդին: Այս բոլորը չի էլ մեկնաբանվելու, իսկ ինչ վերաբերվում է 1915թ.-ի ցեղասպանության ճանաչմանը, հիշենք, թե ինչպես է խմբագրված գերագույն խորհրդի որոշման մեջ. Օսմանյան Թուրքիայում հայերի նկատմամբ կատարված ցեղասպանություն, դա պատահականություն չէ, սա արված է Մոսկվայի թելադրանքով, այստեղ հողային հարց չկա, Արևմտյան Հայաստան չկա, որովհետև Մոսկվան, տասնամյակներ շարունակ հայտարարում է, մենք հողային պահանջ չունենք, ահա այդ խմբագրության էությունը: Իսկ ի՞նչ է նշանակում ճանաչել Սումգայիթը որպես ոճրագործություն: Ոճրագործությունը ցեղասպանություն չէ, նորից ճիշտ հասկանանք, Գերագույն Խորհրդի այդ որոշումը, որ գցել է ոմանց թյուրամացության մեջ: Ցեղասպանությունից ոճրագործություն հսկայական տարբերություն կա, սա էլ գիտակցենք: Ուրեմն ասելիքս այն է, որ այսքան պայքարեցինք, և թվում է, թե ինչ որ բանի հասանք: Ոչնչի չենք հասել: Խմբագրումների ենք հասել, որոնք դեռ էլի պիտի խմբագրվեն, խմբագրվեն նորից՝ այդպիսի դաժան, երկկողմանի բացում նենգ միտումներով և այսպես անվերջ: Մեր կարճ ճանապարհը անկախության ճանապարհն է, բոլոր հարցերի լուծումը կախված է անկախությունից: Եկեցեք անկախ Հայաստանը:

ԱԻՄ-ի ,,Ինքնորոշում,, թերթ, 12 օգոստոսի, 1989թ., հ.7, էջ 12